



Տինանավորվում է
Եվրոպական միության կողմից

«Աջակցություն ՀԸԳՀ-ի մշտադիտարկմանը, իրականացմանը և հաղորդակցությանը»
ENI/2023/442-873

Ձեկույց

Էներգետիկայի ոլորտ

Համապարտակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի մշտադիտարկում

Հեղինակ՝ Աստղինե Պասոյան

Երևան 2025



Տինանավորվում է
Եվրոպական միության կողմից

«Աջակցություն ՀԸԳՀ-ի մշտադիտարկմանը, իրականացմանը և հաղորդակցությանը»
ENI/2023/442-873

Սույն հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակության պատասխանատվությունը կրում է բացառապես հեղինակը՝ Աստղինե Պասոյանը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:



Բովանդակություն

Համառոտագիր **Error! Bookmark not defined.**

Ներածություն 12

Էներգետիկ քաղաքականության ինստիտուցիոնալ միջավայրը 15

 «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենք 15

 «Էներգախնայողության եւ վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-122-Ն, 2004թ.) 16

 ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգ 16

 ՀՀ էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիր (մինչև 2040թ.) 16

 Էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացման միջոցառումների ծրագիր եւ շուկայի կանոնակարգում 17

 «Շենքերի եւ շինությունների, շինանյութերի եւ ապրանքների անվտանգության մասին» Եվրասիական մաքսային միության տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ) 17

 ՀՀ կառավարության որոշումը «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության եւ էներգասարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին» 17

 Էներգետիկ փորձաքննության իրականացման կարգը 18

 Էներգասարդյունավետություն. Շենքի էներգետիկ անձնագիր 18

Էներգետիկ անվտանգություն եւ ցանցի արդիականացում, Հոդված 44 18

 Միջաահմանային առևտուր. տարածաշրջանային շուկայի ինտեգրում 20

 Էներգախնայողության եւ Վերականգնվող էներգետիկայի 2022-2030թթ. ծրագիր 20

Շենքերի էներգասարդյունավետության մասին հրահանգ 22

 Շենքերի վերանորոգման ռազմավարություն եւ ծրագիր 23

 Թիրախային նպատակների սահմանում 23

 Բազային (հղումային) արժեքների սահմանում 23

 Շենքի էներգետիկ անձնագիր եւ հավաստագրում 24

 Շենքի վերանորոգման անձնագիր 25

 Գրեթե զրոյական էներգասպառմամբ շենքեր 25

 Էներգիա օգտագործող արտադրանքի համար էկոդիզայնի պահանջների սահմանման շրջանակ. 2009/125/ԵՀ հրահանգ 27

 Ատոմային էներգիա եւ անվտանգություն, հոդված 58 28

Քաղաքականության առաջարկություններ 30

Եզրակացություններ 32



Համառոտագիր

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Եվրոպական միության (ԵՄ) միջև «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը» (ՀԸԳՀ) ստորագրվել է 2017 թվականին և ուժի մեջ է մտել 2021 թվականին: Համաձայնագիրը նպատակ ունի ամրապնդել ժողովրդավարությունը, օրենքի գերակայությունը և մարդու իրավունքները Հայաստանում: Այն նաև կենտրոնանում է տնտեսական արդիականացման և աճի, առևտրային հարաբերությունների բարելավման և կայուն զարգացման խթանման վրա: Համաձայնագիրը խրախուսում է բարեփոխումները կառավարման, կոռուպցիայի դեմ պայքարի, արդարադատության համակարգի անկախության և հանրային կառավարման ոլորտներում: Այն նաև խթանում է քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունը և քաղաքականության շուրջ երկխոսությունը:

ՀԸԳՀ-ն ներառում է էներգետիկ ոլորտին վերաբերող մոտ 70 փաստաթուղթ, այդ թվում՝ դիրեկտիվներ և տեխնիկական կանոնակարգեր, որոնք կարելի է ընդհանուր առմամբ խմբավորել վեց ընդհանուր ուղղություններով, մասնավորապես՝

1. Էլեկտրաէներգիայի ներքին շուկաներ.
2. Վերականգնվող էներգետիկա.
3. Էներգաարդյունավետություն.
4. Շենքերի էներգաարդյունավետություն.
5. Էլեկտրաէներգիայի միջպետական առևտուր.
6. Էկոդիզայնի և էներգետիկ պիտակավորման (մակնշման) դիրեկտիվներ և կանոնակարգեր:

Վերոնշյալ ցանկի առաջին չորս խմբերի դեպքում իրականացվել են օրենսդրության մոտարկման ուղղությամբ նշանակալի գործողություններ՝ հաշվի առնելով արդեն իսկ ընդունված և քննարկման փուլում գտնվող օրինանախագծերը: Առաջընթացը բավարար չէ իրավասու հաստատությունների նշանակման և դրանց համապատասխան լիազորություններով օժտման ուղղությամբ: Առաջընթացը գոհացնող չէ նաև ընդունված օրենսդրության կիրարկման համար պատշաճ կարգավորումների ներդրման ուղղությամբ:

Վերջին երկու խմբերի դեպքում («Էլեկտրաէներգիայի միջպետական առևտուր» և «Էկոդիզայն և պիտակավորում») մոտարկման որեւէ միջոցառման չի գեկուցվել: Էկոդիզայնի և էներգետիկ պիտակավորման վերաբերյալ հրահանգների ու կանոնակարգերի մոտարկման ուղղությամբ առաջընթացը սահմանափակ է եղել հիմնականում Եվրասիական մաքսային միության առևտրային կանոնակարգերի հետ առկա հակասությունների պատճառով: Իսկ միջպետական առևտրի ոլորտում մոտարկման ջանքերի պակասը պայմանավորված է հատկապես ԵՄ-ի հետ տարածաշրջանային էներգետիկ առևտուրը զարգացնելու իրատեսականության շուրջ առկա վերապահումներով:

Վերոնշյալ չորս առանցքային ոլորտները գնահատվել են ռազմավարական փաստաթղթերի և իրավակարգավորիչ փաստաթղթերի մակարդակով: Մոտարկման կարգավիճակը գնահատվել է օրենսդրական մոտարկման մակարդակի (ազգային օրենսդրության մշակում և ընդունում), ինչպես նաև համապատասխան ինստիտուցիոնալ և կիրարկման մեխանիզմների մշակման հիման վրա: Գնահատման համար օգտագործվել են հետևյալ միջակայքերը. [0-20%] - չկա մոտարկում; [21-40%]



-ընթացքի մեջ է; [41-60%] - մասնակի մոտարկում; [61-80%] - զգալի մոտարկում; [81-100%] – ամբողջական մոտարկում:

Աղյուսակ 1. Էներգաարդյունավետության մասին դիրեկտիվի մոտարկման մակարդակը

Առանցքային դրույթ	Հիմնական պահանջներ	Կարգավորման դաշտ	Ինստիտուցիոնալ կառուցվածք	Կիրարկում	Մոտարկում %	Մոտարկման կարգավիճակ
1. Էներգաարդյունավետության նպատակներ	Սահմանել Էներգաարդյունավետության ազգային կանխատեսումային նպատակներ 2020 թվականի համար	3	2	1	67%	Զգալի մոտարկում
2. Էներգաարդյունավետության պարտավորության սխեմաներ	Պարտավորվող կողմերի (Էներգամատակարարներ / մանրածախ վաճառողներ) առջև դնել տարեկան խնայողությունների պահանջ	2	2	0	44%	Մասնակի մոտարկում
3. Հանրային շենքերի վերանորոգում	Տարեկան վերանորոգել կենտրոնական կառավարության շենքերի մակերեսի 3%-ը	1	0	0	11%	Մոտարկում չկա
4. Էներգետիկ փորձաքննություններ և Էներգետիկայի կառավարման համակարգեր	Խոշոր ձեռնարկությունների համար սահմանել յուրաքանչյուր 4 տարին մեկ պարտադիր փորձաքննություն անցնելու պահանջ	3	2	1	67%	Մասնակի մոտարկում
5. Չափման և հաշիվների ներկայացման	Ապահովել ճշգրիտ և հաճախակի հաշիվների	3	0	0	33%	Ընթացքի մեջ է



Տինանավորվում է
Եվրոպական միության կողմից

«Աջակցություն ՀԸԳՀ-ի մշտադիտարկմանը, իրականացմանը և հաղորդակցությանը»
ENI/2023/442-873

մասին տեղեկատվություն	ներկայացում հիմնված փաստացի սպառման վրա								
6. Արդյունավետ ջեռուցման և հովացման խթանում	Մշակել արդյունավետ կենտրոնացված ջեռուցման և ՋԷԿ-երի ռազմավարություններ	3	0	0	33%	Ընթացքի մեջ է			
7. Էներգիայի փոխակերպման, հաղորդման և բաշխման արդյունավետություն	Նվազեցնել էներգետիկ կորուստները և խթանել պահանջարկի կառավարումը	1	0	0	11%	Մոտարկում չկա			
8. Պետական գնումներ և էներգաարդյունավետություն	Պետական մարմինների առջև դնել էներգաարդյունավետ ապրանքներ և շենքեր ձեռք բերելու պահանջ	3	3	2	89%	Ամբողջական մոտարկում			
9. Որակավորման և հավատարմագրման սխեմաների առկայություն	Ապահովել էներգաարդյունավետության վերաբերյալ ուսուցման և հավաստագրման ծրագրերի առկայություն	2	2	0	44%	Մասնակի մոտարկում			
10. Սոնիթորինգի և հաշվետվությունների պահանջներ	Ներկայացնել էներգաարդյունավետության ազգային միջոցառումների ծրագրեր և տարեկան հաշվետվություններ	3	2	1	67%	Չգալի մոտարկում			
0-20%	չկա մոտարկում	21-40%	ընթացքի մեջ է	41-60%	Մասնակի մոտարկում	61-80%	Չգալի մոտարկում	81-100%	Ամբողջական



										մոտարկում
--	--	--	--	--	--	--	--	--	--	-----------

Աղյուսակ 2. Շենքերի էներգաարդյունավետության մասին դիրեկտիվի մոտարկման մակարդակը

Առանցքային դրույթ	Հիմնական պահանջներ	Կարգավորման դաշտ	Ինստիտուցիոնալ կառուցվածք	Կիրարկում	Մոտարկում (%)	Մոտարկման կարգավիճակ
1. Էներգաարդյունավետության նվազագույն պահանջներ	Սահմանել եւ շենքերի էներգաարդյունավետության նվազագույն չափանիշներ եւ պարբերաբար թարմացնել դրանք	3	2	1	67%	Չգալի մոտարկում
2. Գրեթե զրոյական էներգասպառմամբ շենքեր (ԳՉԷՇ)	Ապահովել, որ 2020թ. վերջի դրությամբ բոլոր նորակառույց շենքերը լինեն գրեթե զրոյական էներգասպառմամբ (հանրային շենքերը՝ 2018թ. դրությամբ)	1	0	0	11%	Մոտարկում չկա
3. Էներգաարդյունավետության հավաստագրեր (ԷԱՀ)	Ներդնել ԷԱՀ-ներ նոր կառուցվող, վաճառվող կամ վարձակալության տրվող շենքերի համար	3	2	1	67%	Չգալի մոտարկում
4. Ջեռուցման եւ օդորակման համակարգերի տեսչական ստուգում	Սահմանել ջեռուցման եւ օդորակման համակարգերի կանոնավոր տեսչական ստուգումներ	3	0	0	33%	Ընթացքի մեջ
5. Շենքերի վերանորոգման ռազմավարություն (վերաձեւակերպված՝ ծրագիր)	Մշակել շենքերի ֆոնդի վերանորոգման ազգային երկարաժամկետ ռազմավարություն	1	0	0	11%	Մոտարկում չկա
6. Շենքերի բազային տվյալների շտեմարան (վերաձեւակերպված՝ շենքերի թվային գրանցամատյան)	Մշակել շենքերի բազային տվյալների բանկ՝ շենքերի վերանորոգման ռազմավարության մեջ հղումներ կատարելու համար	1	0	0	11%	Մոտարկում չկա
7. Ծախսարդյունավետ	Օգտագործել ծախսարդյունավետ	0	0	0	0%	Մոտարկում չկա



Տիեզերական միության կողմից

«Աջակցություն ՀԸԳՀ-ի մշտադիտարկմանը, իրականացմանը և հաղորդակցությանը»
ENI/2023/442-873

տ մեթոդաբանություն	հաշվարկներ՝ Էներգաարդյունավետության մակարդակները սահմանելու համար								
8. Շենքերի տեխնիկական համակարգեր	Խթանել խելացի տեխնոլոգիաները եւ համակարգի արդյունավետության բարելավումները	0	0	0	0%	Մոտարկ ում չկա			
9. ԷԱՀ-ների եւ տեսչական ստուգումների անկախ վերահսկողության համակարգեր	Ստեղծել վերահսկման համակարգեր՝ ԷԱՀ-ների տրամադրումը եւ որակը, ինչպես նաեւ տեսչական ստուգումները վերահսկելու համար	0	0	0	0%	Մոտարկ ում չկա			
10. Տեղեկատվություն շենքերի սեփականատերեր ի եւ վարձակալների համար	Խթանել իրագելվածությունը եւ տրամադրել Էներգաարդյունավետության միջոցառումների վերաբերյալ ուղեցույց	2	1	0	33%	Ընթացք ի մեջ է			
11. Պետական մարմինների դերը	Պետական մարմինները պետք է օրինակ ծառայեն Էներգաարդյունավետության պահանջների կատարման գործում	0	0	0	0%	Մոտարկ ում չկա			
Ընդհանուր մոտարկում					21%	Ընթացք ի մեջ			
0- 20%	չկա մոտարկո ւմ	21- 40 %	ընթաց քի մեջ է	41- 60%	Մասնակի մոտարկում	61- 80%	Չգալի մոտարկ ում	81- 100 %	Ամբողջական մոտարկում

Աղյուսակ 3. Վերականգնվող Էներգետիկայի մասին դիրեկտիվի մոտարկման մակարդակը

Առանցքային դրույթ	Հիմնական պահանջներ	2009/28/ԵՀ հրահանգ՝ վերականգնվող աղբյուրներից էներգիայի օգտագործումը խթանելու մասին				
		Կարգա վորման դաշտ	Ինստիտ ուցիոնալ կառուցվ ածք	Կիրա րվում	Մոտ արկո ւմ (%)	Մոտարկման կարգավիճակ
1. Վերականգնվող էներգետիկայի	Էներգիայի սպառման մեջ ՎԷԱ-ների մասնաբաժնի համար պարտադիր	3	3	2	89%	Ամբողջական մոտարկում



Տինանավորվում է
Եվրոպական միության կողմից

«Աջակցություն ՀԸԳՀ-ի մշտադիտարկմանը, իրականացմանը և հաղորդակցությանը»
ENI/2023/442-873

ազգային նպատակներ	ազգային նպատակների ամրագրում; Վերականգնվող էներգետիկայի ոլորտում ազգային միջոցառումների ծրագրի ընդունում					
2. Ծագման երաշխիքներ	Ստեղծել էլեկտրաէներգիայի, ջեռուցման եւ հովացման համար ՎԷԱ ծագման երաշխիքների համակարգ	3	3	3	100 %	Ամբողջական մոտարկում
3. Վարչական ընթացակարգեր եւ դրանց լավարկում	Պարզեցնել ՎԷԱ համակարգերի տեղադրման վարչական ընթացակարգերը	3	3	2	89%	Ամբողջական մոտարկում
4. Էլեկտրական ցանցերի հասանելիություն եւ շահագործում	Ապահովել ցանցի հասանելիության երաշխավորված առաջնահերթություն ՎԷԱ-ից ստացված էլեկտրաէներգիայի համար; Սահմանել ոչ խտրական մուտքի կանոններ	3	3	2	89%	Ամբողջական մոտարկում
5. Կենսաէներգիայի կայունության չափանիշներ	Սահմանել կայունության չափանիշներ կենսավառելիքի եւ կենսահեղուկների համար	3	2	2	78%	Զգալի մոտարկում
6. Հաշվետվողականություն եւ մոնիթորինգ	Երկու տարին մեկ ներկայացնել հաշվետվություններ ՎԷԱ ներդրման եւ քաղաքականության միջոցառումների մասին	3	2	1	67%	Զգալի մոտարկում
7. Վերականգնվող էներգետիկան տրանսպորտում	Ապահովել, որ մինչև 2020 թվականը տրանսպորտի ոլորտում էներգասպառման նվազագույնը 10%-ն ապահովվի ՎԷԱ-ից	3	2	1	67%	Զգալի մոտարկում
8. Վերականգնվող էներգետիկայի խթանում	Խրախուսել ՎԷԱ-ի կիրառումը շինարարական նորմերում եւ կենտրոնացված	2	2	1	56%	Մասնակի մոտարկում



Տինանավորվում է
Եվրոպական միության կողմից

«Աջակցություն ՀԸԳՀ-ի մշտադիտարկմանը, իրականացմանը և հաղորդակցությանը»
ENI/2023/442-873

ջեռուցման եւ հովացման ոլորտում		ջեռուցման/հովացման համակարգերում							
9. Ուսուցում եւ տեղեկատվություն		Իրականացնել ՎԷԱ համակարգերի տեղադրողների ուսուցում եւ հավաստագրում Խթանել սպառողների իրազեկվածությունը		2	2	2	67%	Զգալի մոտարկում	
Ընդհանուր մոտարկում							78%	Զգալի մոտարկում	
0-20%	չկա մոտարկում	21-40%	ընթացքի մեջ է	41-60%	Մասնակի մոտարկում	61-80%	Զգալի մոտարկում	81-100%	Ամբողջական մոտարկում

Աղյուսակ 4. Էլեկտրաէներգիայի շուկաների մասին դիրեկտիվի մոտարկման մակարդակը

Առանցքային դրույթ	Հիմնական պահանջներ	Կարգավորման դաշտ	Ինստիտուցիոնալ կառուցվածք	Կիրարկում	Մոտարկում (%)	Մոտարկման կարգավիճակ
1. Էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցերի եւ օպերատորների տարանջատում	Մեփականության տարանջատում Անկախ համակարգի օպերատոր (ISO) եւ անկախ հաղորդման օպերատոր (ITO)	3	3	3	100%	Ամբողջական մոտարկում
2. Բաշխման համակարգի օպերատորների տարանջատում	Իրավական եւ գործառույթային տարանջատում	3	3	3	100%	Ամբողջական մոտարկում
3. Ազգային կարգավորող մարմինների լիազորությունների ամրապնդում	Կարգավորող մարմինների անկախություն Իրավունքներ եւ պարտականություններ	2	1	2	56%	Մասնակի մոտարկում
4. Սպառողի իրավունքներ եւ խոցելի	Համընդհանուր սպասարկում եւ խոցելի	1	1	1	33%	Ընթացքի մեջ է



պաշտպանություն	սպառողների պաշտպանություն; Մատակարարին ազատորեն ընտրելու և մատակարարներին փոխելու իրավունք; Թափանցիկ հաշիվների կայացման և սպառման տվյալներ; Վեճերի լուծման արդյունավետ մեխանիզմներ					
5. Հանրային ծառայությունների մատուցման պարտավորություններ	Հստակ սահմանված պարտավորություններ (մատակարարման անվտանգություն, շրջակա միջավայրի պաշտպանություն, սպառողի իրավունքների պաշտպանություն)	1	1	1	33%	Ընթացքի մեջ է
6. Երրորդ կողմի մուտք ցանց	Կարգավորվող, թափանցիկ և ոչ խտրական մուտք ցանցեր	3	3	2	89%	Զգալի մոտարկում
7. Ցանցային սակագներ և թափանցիկություն	Մակագնի մեթոդաբանության թափանցիկություն և հիմնական տվյալների հրապարակում	3	3	2	89%	Զգալի մոտարկում
8. Միջպետական համագործակցում	Տարածաշրջանային	2	2	0	44%	Մասնակի



Տնտեսական միության կողմից

«Աջակցություն ՀԸԳՀ-ի մշտադիտարկմանը, իրականացմանը և հաղորդակցությանը»
ENI/2023/442-873

թյուն եւ տարածաշրջանային ինտեգրում	Ենթակառուցվածքների նախագծման համակարգում Մասնակցություն Հաղորդման համակարգի օպերատորների եվրոպական ցանցին (ENTSO-E) Համաձայնեցված ցանցային կոդերի մշակում					մոտարկում
9. Ենթակառուցվածքներ եւ ցանցի զարգացում	Ցանցի զարգացման տասնամյա ծրագիր	3	2	2	78%	Զգալի մոտարկում
10. Մրցակցության խթանում եւ շուկայի բացում	Շուկայի լիարժեք ազատականացում եւ թափանցիկ շուկայական կանոններ	3	3	2	89%	Ամբողջական մոտարկում
Ընդհանուր մոտարկում					71%	Զգալի մոտարկում
0-20%	21-40%	41-60%	61-80%	81-100%		
չկա մոտարկում	ընթացքի մեջ է	Մասնակի մոտարկում	Զգալի մոտարկում	Ամբողջական մոտարկում		

Ազգային քաղաքականության փաստաթղթերի դրույթների եւ ինստիտուցիոնալ միջավայրի ավելի մանրամասն նկարագրիչ ներկայացված է ստորև բաժիններում:

Ներածություն

Հայաստանն արդեն իսկ սկսել է կիրարկել 2021թ. փետրվարից ուժի մեջ մտած ՀԸԳՀ էներգաարդյունավետության դրույթները: ՀԸԳՀ-ի կիրարկումը կնշանակի, որ Հայաստանը մոտարկվում է էներգաարդյունավետության մասին ԵՄ հիմնական օրենքներին, ինչպիսիք են Էկոդիզայնի հրահանգը, որը վերաբերում է բոլոր վերջնական օգտագործման դեպքերին եւ էներգիա օգտագործող սարքավորումներին, եւ Շենքերի էներգաարդյունավետության դիրեկտիվը, որը պարունակում է կարելու դրույթներ ինչպես նորակառույց, այնպես էլ վաղուց գոյություն ունեցող շենքերի համար: Համաձայնագրի առանցքում ներառված համապատասխան հրահանգներն ու կանոնակարգերը (կարճ նկարագրությամբ) հետևյալն են.



- 2012/27/ԵՄ հրահանգ - Էներգաարդյունավետություն.
- 2015/2402 կանոնակարգ (ԵՄ) - Էլեկտրական և ջերմային էներգիայի անջատ արտադրության բազային (հղումային) արժեքների ներդաշնակեցում.
- 2010/31/ԵՄ հրահանգ - Շենքերի էներգաարդյունավետություն.
- 244/2012 կանոնակարգ (ԵՄ) - Շենքերի էներգաարդյունավետություն.
- 2009/33/ԵՀ հրահանգ - Էկոլոգիապես մաքուր և էներգաարդյունավետ ավտոմոբիլային տրանսպորտի օգտագործում:

Եվրոպական միության (ԵՄ)՝ վերջերս վերանայված Էներգաարդյունավետության մասին դիրեկտիվը (ԵՄ/2023/1791) և Շենքերի էներգաարդյունավետության մասին դիրեկտիվը (ԵՄ/2024/1275) կենտրոնական տեղ են զբաղեցնում ԵՄ-ի՝ ջերմոցային գազերի արտանետումների կրճատման, էներգաարդյունավետության բարելավման և անդամ պետություններում կայուն աճի խթանման ռազմավարություններում: Այս դիրեկտիվները սահմանում են շենքերի էներգաարդյունավետության բարելավմանը, խոցելի տնային տնտեսություններին աջակցելուն և էներգետիկ շուկաները վերափոխելուն ուղղված հավակնոտ նպատակներ և քաղաքականություններ: Անդամ պետությունները պետք է իրենց ազգային օրենսդրության մեջ ներառեն Էներգաարդյունավետության դիրեկտիվի (ԷԱՀ) և Շենքերի էներգաարդյունավետության դիրեկտիվի (ՇԷԱՀ) պահանջները ոչ ուշ, քան՝ համապատասխանաբար՝ 2025 թվականի հոկտեմբերը և 2026 թվականի մայիսը:

Նախնական զեկույցում դիտարկված ՀՀ վերոհիշյալին համապատասխան քաղաքականության փաստաթղթերի շրջանակը ներառում է.

- «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենք.
- Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիր (մինչև 2040թ.).
- «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-122-Ն), ընդունված է 2004թ. նոյեմբերի 9-ին, փոփոխված է 2016թ. մայիսի 12-ին և 2017թ. դեկտեմբերի 21-ին.
- ՀՀ կառավարության 2013թ. մարտի 14-ի N225-Ն որոշում, որով կարգավորվում են քաղաքաշինության բնագավառում էներգաարդյունավետությանն ու էներգախնայողությանը վերաբերող դրույթները.
- ՀՀ կառավարության 2014թ. դեկտեմբերի 25-ի N 1504-Ն որոշումը «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին».
- Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգ (հայտնի է որպես «Շենքերի էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգ», որը և սույն վերլուծության առարկան է).
- «Վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության մասին» ՀՀ օրենքի նախագիծ (նախատեսվում է ընդունել 2025թ., կփոխարինի 2004թ. ընդունված «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքին).
- Էներգախնայողության և վերականգնվող էներգիայի 2-րդ ազգային ծրագիր (ԷԽՎԷԱԾ).
- Էներգաարդյունավետության ազգային միջոցառումների 3-րդ ծրագիր (2022-2024թթ.).



- Էներգաարդյունավետության ազգային միջոցառումների 4-րդ ծրագրի նախագիծ (2025-2027թթ., սպասում է ընդունման)։
- ՀՀ կառավարության 2015թ. դեկտեմբերի 17-ի N 1492-Ն որոշումը «Էներգասպառող սարքերի և սարքվածքների պիտակավորման կարգը և պիտակի ձեւը սահմանելու մասին»։
- Եվրասիական տնտեսական միության կանոնակարգերը էներգասպառող սարքերի և սարքվածքների պիտակավորման մասին։

Հայաստանը ցուցաբերել է ամուրի հանձնառություն՝ իր էներգետիկ ոլորտը միջազգային չափանիշներին և ԵՄ կանոնակարգերին համապատասխանեցնելու գործում։ Հիմնական օրենսդրական փոփոխությունները, այդ թվում՝ «Էներգետիկայի մասին» և «Վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության մասին» օրենքներում, ինչպես նաև տարբեր կարգավորող շրջանակներն երկրի նախաձեռնողական մոտեցման առհավատյան են։ Այնուամենայնիվ, տվյալների որակի, վարչական կարողությունների և հանրային իրազեկման հետ կապված մարտահրավերներն, իրենց հերթին, ընդգծում են շարունակական օրենսդրական թարմացումների և վերանայումների կարելիությունը։



Էներգետիկ քաղաքականության ինստիտուցիոնալ միջավայրը

Վերոնշյալ փաստաթղթերով ձեւավորված քաղաքականության միջավայրի համառոտ ամփոփմամբ կարելի է նշել, որ ՀՀ կառավարությունն ակտիվորեն աշխատում է շինարարության ոլորտում վերջերս ընդունված էներգաարդյունավետության օրենսդրական պահանջների արդյունավետ կիրարկման ուղղությամբ: Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը (ՏԿԵՆ) պատասխանատու է Հայաստանի կողմից ԵՄ-ՀՀ ՀԸԳՀ համաձայնագրի շրջանակներում Շենքերի էներգաարդյունավետության դիրեկտիվի կատարումն ապահովելու համար: ՏԿԵՆ-ը համագործակցում է Քաղաքաշինության պետական կոմիտեի հետ՝ դիրեկտիվների, շինարարական նորմերի եւ բնակարանային քաղաքականության ներդրման ուղղությամբ: Այլ գերատեսչություններ, այդ թվում՝ Ծրջակա միջավայրի, Էկոնոմիկայի եւ Ֆինանսների նախարարությունները, օժանդակող դեր ունեն շենքերի էներգաարդյունավետության քաղաքականության իրականացման գործընթացում: Միեւնույն ժամանակ, ՀՀ վիճակագրական կոմիտեն ունի հստակ, բայց սահմանափակ դեր՝ ապահովելու անհրաժեշտ պաշտոնական էներգետիկ վիճակագրությունը եւ գործունեության տվյալները, որոնք պահանջվում են ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի (ԿՓՇԿ) շրջանակում Հայաստանի ջերմոցային գազերի արտանետումների գնահատման համար: Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (ՀԾԿՀ) սահմանում է էներգետիկայի ոլորտում սակագները, տրամադրում է լիցենզիաներ եւ կարգավորում շուկայի կանոնները: Հայաստանի վերականգնվող էներգետիկայի եւ էներգախնայողության հիմնադրամը (ՀՎԷԷ) կարելու դեր է խաղում դեպի էներգախնայողության եւ վերականգնվող էներգետիկայի ծրագրեր ներդրումների ուղղորդման գործում՝ տրամադրելով համալիր ծառայություններ նախագծերի մշակողներին, ներդրողներին, ֆինանսական հաստատություններին, համատիրություններին, հետազոտողներին եւ այլ շահագրգիռ կողմերին: Հիմնադրամը նաեւ տրամադրում է մասնագիտական խորհրդատվություն կառավարությանը՝ կանաչ էներգետիկայի ռազմավարությունների եւ օրենսդրության մշակման հարցերում:

ՀՀ կառավարության առանցքային կառույցների ունեցած այս լիազորությունները պարարտ հող են ստեղծում էներգաարդյունավետության եւ վերականգնվող էներգետիկայի քաղաքականությունների, ինչպես նաեւ շենքերի վերանորոգման ռազմավարության եւ գործողությունների ծրագրի պլանավորման ու իրականացման համար:

Էներգաարդյունավետություն եւ վերականգնվող էներգետիկայի զարգացում, էներգետիկ շուկաներ (հոդված 42). Հայաստանի սզգային քաղաքականության ակնարկ

Հայաստանի էներգետիկ ոլորտը կարգավորվում է մի շարք կարելու օրենքներով, որոնք ձեւավորում են էներգիայի արտադրության, բաշխման եւ սպառման շրջանակը՝ շեշտը դնելով արդյունավետության, կայունության եւ վերականգնվող էներգառեսուրսների զարգացման վրա: Հիմնական օրենքներն են՝

«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենք

Օրենքը կարգավորում է ՀՀ կառավարության մարմինների, էներգետիկ ոլորտի կազմակերպությունների եւ էլեկտրական կամ ջերմային էներգիայի, ինչպես նաեւ բնական գազի սպառողների միջեւ հարաբերությունները: Հիմնական դրույթներն են.

- խթանում է ավանդական եւ այլընտրանքային էներգառեսուրսների արդյունավետ օգտագործումը.



- խրախուսում է էներգետիկայի ոլորտում մրցակցությունը եւ արդյունավետ գործունեությունը.
- ապահովում է էներգետիկ գործառնությունների թափանցիկությունն ու անվտանգությունը.
- աջակցում է էներգետիկ ոլորտ ներդրումների ներգրավմանը.
- ընդգծում է շրջակա միջավայրի պահպանության կարելությունը.
- սահմանում է էլեկտրական եւ ջերմային էներգիայի, ինչպես նաեւ բնական գազի կարգավորվող սակագների սահմանման հիմնական սկզբունքները:

«Էներգախնայողության եւ վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-122-Ն, 2004թ.)

«Էներգախնայողության եւ վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքը սահմանում է պետական քաղաքականությունը էներգաարդյունավետության եւ էներգիայի վերականգնվող աղբյուրների զարգացման ոլորտում: Հիմնական դրույթներն են.

- կառավարության առջեւ պահանջ է դնում մշակել էներգաարդյունավետությունը խթանող ծրագրեր.
- սահմանում է տնտեսական խթաններ վերականգնվող էներգետիկայի ոլորտի ծրագրերի համար.
- աջակցում է խոշոր էներգասպառողների պարտադիր էներգետիկ փորձաքննությանը.
- ապահովում է վերականգնվող աղբյուրներից ստացված էլեկտրաէներգիայի երաշխավորված գնման հնարավորություն՝ ֆիքսված սակագներով:

ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգ

2013 թվականին ՀՀ կառավարությունը մշակեց էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգը, որը սահմանում է առավելապես վերականգնվող էներգետիկայի եւ միջուկային էներգետիկայի միջոցով վառելիքի դիվերսիֆիկացման, վառելիքի պաշարների կուտակման եւ էլեկտրաէներգիայի արտադրության հզորությունների ավելացման ռազմավարությունները: Հետագայում՝ 2014 թվականին, հաստատվել է այդ անվտանգության հայեցակարգի իրականացման 2014-2020թթ. միջոցառումների ժամանակացույցը:

ՀՀ էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիր (մինչեւ 2040թ.)

2021թ. հունվարի 14-ին ՀՀ կառավարությունը հաստատեց ՀՀ էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիրը (մինչեւ 2040թ.), ինչպես նաեւ դրա իրականացման ծրագրային ժամանակացույցը: Ժամանակացույցը սահմանում է գործողության ակնկալվող արդյունքը, ազդեցությունը, պատասխանատու մարմինների եւ համատեղ իրականացնող կազմակերպությունների շրջանակը, վերջնաժամկետը, միջոցառման արժեքը եւ ֆինանսավորման աղբյուրը:

«Ռազմավարություն 2040»-ը սահմանում է էներգետիկ ոլորտի զարգացման հետեւյալ հիմնական առաջնահերթությունները.

- Վերականգնվող էներգետիկայի ներուժի առավելագույն օգտագործում՝ արեւային կայանների ընդհանուր հզորությունը հասցնելով 1000 ՄՎտ-ի, իսկ վերականգնվող էներգիայի արտադրության մասնաբաժինն ընդհանուրի մեջ հասցնելով առնվազն 15%-ի.
- Էներգաարդյունավետության ներուժի հնարավոր իրացում.
- ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացում.



- «Հյուսիս-Հարավ» ճանապարհային միջանցքի կառուցման ծրագիր.
- Էլեկտրաէներգիայի շուկայի աստիճանական ազատականացում:

Էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացման միջոցառումների ծրագիր և շուկայի կանոնակարգում

ՀՀ Էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացման միջոցառումների ծրագիրը ներառում է օրենսդրական և կարգավորող շրջանակի մշակումը, ինչպես նաև այն գործառնական և կառուցվածքային փոփոխություններ, որոնք անհրաժեշտ են մրցակցային էլեկտրաէներգիայի շուկայի ձևավորման համար: Էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոնները (ԷՄՇ կանոններ) սահմանում են մանրածախ շուկայի գործունեության սկզբունքները, ԷՄՇ-ում առևտրի իրականացման կարգը, մատակարարի փոփոխման ընթացակարգը, սպառված էլեկտրաէներգիայի հաշվարկման և վճարման մեխանիզմները և այլն: Բոլոր այս փաստաթղթերը ուժի մեջ են մտել 2022 թվականի փետրվարի 1-ից: Նոր կանոնները սահմանում են էլեկտրաէներգետիկական մեծածախ և մանրածախ շուկայում գործելու և առևտուր կատարելու հիմնական սկզբունքները, ինչպես նաև շուկայի մասնակիցների պարտականությունները:

«Շենքերի և շինությունների, շինանյութերի և ապրանքների անվտանգության մասին» Եվրասիական մաքսային միության տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ)

2011թ. դեկտեմբերի 13-ից Եվրասիական տնտեսական միությունը շրջանառության մեջ է դրել «Շենքերի և շինությունների անվտանգության» տեխնիկական կանոնակարգի նախագիծը: Այն մշակվել է 2010թ. նոյեմբերին ստորագրված՝ «Մասնակից երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, տեխնիկական կանոնակարգման միասնական սկզբունքների և կանոնների մասին» համաձայնագրի հիման վրա: Գործող տեխնիկական կանոնակարգի նպատակն է սահմանել պահանջներ շենքերի և շինությունների, շինանյութերի և ապրանքների նկատմամբ՝ ելնելով Եվրասիական մաքսային միության ընդհանուր տարածքում դրանց օգտագործման և շրջանառության նկատառումներից: Այս պահանջները, ի թիվս այլի, վերաբերում են շենքային կառույցների և դրանց տարրերի էներգասարդյունավետությանը, ինչպես նաև բնապահպանական անվտանգությունը:

ՀՀ կառավարության որոշումը «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգասարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին»

«Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգասարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին» ՀՀ կառավարության 2014թ. դեկտեմբերի 25-ի N 1504-Ն որոշումը սահմանում է պարտադիր միջոցառումների ցանկը, որոնք ուղղված են պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգասպառման և շահագործման ծախսերի նվազեցմանը, հարմարավետության նորմատիվ պայմանների ապահովմանը, ինչպես նաև էներգախնայողության և էներգասարդյունավետության բարձրացմանը:



Էներգետիկ փորձաքննության իրականացման կարգը

«Էներգետիկ փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը¹ լրացվել է շենքերի էներգետիկ փորձաքննության վերաբերյալ առանձին գլխով: Որոշումը ուժի մեջ է 2006 թվականից, սակայն մինչ վերջին փոփոխությունները հիմնականում ընդգրկում էր արդյունաբերական էներգետիկ փորձաքննության հետ կապված հարցերը: Այս վերջին փոփոխությամբ շենքերի էներգետիկ փորձաքննության հետ կապված ընթացակարգերը լավ նկարագրված եւ մանրամասն ներկայացված են:

Էներգաարդյունավետություն. Շենքի էներգետիկ անձնագիր

«Էներգաարդյունավետություն. Շենքի էներգետիկ անձնագիր»² ՀՀ ստանդարտը (ՀՍ 362-2013) մշակվել է գրանցվել է Հայաստանի ստանդարտների ազգային ինստիտուտի (ՀՄԱԻ) կողմից սահմանված կարգով՝ 2013թ. դեկտեմբերի 18-ին (գրանցման համար՝ ՀՍ 362-2013): Ստանդարտն ուժի մեջ է մտել 2014թ. հունվարի 1-ից: Ստանդարտը սահմանում է շենքի էներգետիկ անձնագրի ձևաչափը, էներգաարդյունավետության հավաստագրի (պիտակի) ձևաչափը, ինչպես նաև նկարագրում է անձնագիրը լրացնելու մեթոդաբանությունը:

Էներգետիկ անվտանգություն եւ ցանցի արդիականացում, Հոդված 44

Կառավարությունը վճռական քայլեր է ձեռնարկել էլեկտրաէներգիայի ազատականացված շուկայի ներդրման ուղղությամբ, որի շրջանակում նախատեսվում է ունենալ նոր մեծածախ շուկայի մոդել, ուղիղ պայմանագրեր, հավասարակշռման մեխանիզմ եւ երկարաժամկետ ուղղակի հզորության պայմանագրեր: Էներգետիկ շուկայի բոլոր մասնակիցների միջև ազատ եւ բաց առևտուրն ու համագործակցությունը, ինչպես նախատեսված է այս բարեփոխումներով, կնպաստեն միջազգային ներդրումներին եւ կամրապնդեն տարածաշրջանային ինտեգրումը: Հայաստանը կարգավորվող, մեկ գնորդով մոդելից անցում է կատարում մրցակցային էլեկտրաէներգետիկ շուկայի:

2022 թվականի փետրվարի 1-ին մեկնարկեց Հայաստանի էլեկտրաէներգետիկ շուկայի աստիճանական ազատականացումը: Ազատականացման վերջնաձևաչափը էլեկտրաէներգետիկ շուկայի մեկ մատակարարի մոդելից անցում կատարելն է բազմակի մատակարարներով բաց շուկայի մոդելի: Ակնկալվում է, որ թափանցիկ եւ մրցակցային շուկայի ձևավորումը կնպաստի երկրի էներգետիկ ոլորտ ներդրումների հոսքին, ինչպես նաև միջպետական էլեկտրաէներգիայի առևտրի ծավալների ավելացմանը: 2024թ. տարեվերջի դրությամբ Հայաստանում վաճառված ամբողջ էլեկտրաէներգիայի ավելի քան 27%-ը վաճառվել է ազատականացված շուկայում մրցակցային պայմաններով: Հաշվի առնելով, որ այս անցումը նոր շուկային եղել է կամավոր, սա դրական ազդանշան է էներգետիկ շուկայի մյուս բոլոր մասնակիցների համար:

Շուկայի սկզբունքները հիմնված են արդար շուկայական գնի պարզ սկզբունքի վրա: Համակարգը բավականին ճկուն է՝ շնորհիվ տարբեր լրացուցիչ հնարավորությունների: Բացի այդ, «Հաշվարկային կենտրոնն» ամեն կերպ օգնում է այն ընկերություններին, որոնք որոշում են էլեկտրաէներգիայի համար հաշվիչով վճարելու նախկին սխեմայից անցնել էլեկտրաէներգիայի սպառումը պլանավորելու եւ ավելի բարենպաստ սակագնով գնումներ կատարելու նոր շուկայական մեխանիզմների:

¹ Մշակվել է ՄԱԶԾ-ԳԷՀ «Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում» ծրագրի աջակցությամբ

² Մշակվել է ՄԱԶԾ-ԳԷՀ «Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում» ծրագրի աջակցությամբ



Էլեկտրաէներգիայի առևտրի շուկայի նոր մեխանիզմը կառուցված է արտադրության եւ սպառման ժամային գրաֆիկի սկզբունքի վրա: Ցանկացած սպառողի համար ճշգրիտ սպառման պլանավորումը էլեկտրաէներգիայի ծախսերը կրճատելու գրավականն է՝ արտադրող էլեկտրակայանների աշխատանքը լավարկելու միջոցով: Մյուս կողմից՝ արտադրող կայանի համար արտադրության պլանավորված գրաֆիկն իր արտադրած էլեկտրաէներգիան լավագույն գնով վաճառելու գրավականն է:

Ի վերջո, շուկայի նոր մեխանիզմը՝ բոլոր մյուս առավելություններով հանդերձ, հնարավորություններ է բացում նաև առևտրային նպատակներով վերականգնվող աղբյուրների վրա հիմնված էլեկտրակայանների հետագա զարգացման, ինչպես նաև վերականգնվող էներգետիկայի աղբյուրների օգտագործման ընդլայնման եւ դիվերսիֆիկացման համար:

Այնուամենայնիվ, գործող մեխանիզմը դեռևս ունի որոշակի բացեր, այդ թվում՝

- Պահեստավորման (կուտակիչ) համակարգերի կարգավորման բացակայություն.
- Արտոնագրի գործողության ժամկետը, որը նշված է արտոնագրում.
- ՏԿԵՆ-ը տալիս է իր համաձայնությունը, երբ արտոնագիր է տրվում 30 ՄՎտ-ից ավելի հզորությամբ էլեկտրաէներգիայի արտադրության համար.
- Էներգիայի պահեստավորման օբյեկտների տիրապետման եւ շահագործման վերաբերյալ դրույթների բացակայություն.
- Նոր հզորությունների ներդրման շուկայական մեխանիզմների բացակայություն.
- Հաղորդման ցանցը պատկանում է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին (ԲԷՑ) (հաղորդիչ), բայց ցանցերի շահագործումը, պահպանումը եւ զարգացումը վստահված է «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ին (ԷՀՕ) (համակարգի օպերատոր).
- ՏԿԵՆ-ին թույլատրվում է կարգավորել ինչպես հաղորդիչ և բաշխիչ ենթակառուցվածքները (ՀԷՑ եւ ԲԷՑ), այնպես էլ անմիջականորեն կարգավորել արտադրող հզորություններին.
- Բաշխիչ համակարգի օպերատորի եւ համընդհանուր մատակարարի լիցենզիան մինչև 2025թ. հուլիսի 1-ը պետք է պատկանեն մեկ ձեռնարկության՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին (ՀԷՑ).
- Համընդհանուր սպասարկումը եւ արտակարգ մատակարարումը ոչ մրցութային կարգով վերապահված են համընդհանուր մատակարարին.
- Բաշխիչ օպերատորի եւ համընդհանուր մատակարարի իրավունքներն ու պարտականությունները պատշաճ կերպով տարանջատված չեն.
- Համընդհանուր ծառայության մատուցումը հասանելի է բոլոր հաճախորդների համար.
- Հաճախորդների խոցելի խմբերի համար ընդհանուր դրույթներ.
- Ներօրյա (intraday) շուկայի բացակայություն.
- Շուկայի հավասարակշռման կարգավորում.
- Արտադրողների մեծ մասի համար սակագների կարգավորում.
- Մանրածախ շուկայում սահմանափակ մրցակցություն:

Անհրաժեշտ է էլեկտրաէներգիայի շուկայի նոր մոդել, որը կհիմնվի էլեկտրաէներգիայի առևտրի ժամանակակից կանոնների վրա՝ համաձայն էլեկտրաէներգիայի ներքին շուկայի ընդհանուր կանոնների մասին [\(ԵՄ\) 2019/944 դիրեկտիվի](#), կաշխատի առաջարկի եւ պահանջարկի հավասարակշռման ուղղությամբ եւ կսահմանի շուկայի մասնակիցների պատասխանատվության մեխանիզմները առևտրի ընթացքում: Բարեփոխումների առաջին փուլը պահանջում է



շարունակական քայլեր, մասնավորապես՝ «Էլեկտրաէներգիայի մասին» եւ «Վերականգնվող էներգետիկայի եւ էներգաարդյունավետության մասին» նոր մշակված օրենքների նապագծերի ընդունում՝ հաշվի առնելով ԵՄ հրահանգների պահանջները եւ այդպիսով հիմք դնելով բարեփոխումների երկրորդ փուլի սկզբի համար: «Էլեկտրաէներգիայի մասին» եւ «Վերականգնվող էներգետիկայի եւ էներգաարդյունավետության մասին» նոր օրենքների նախագծերը ներառվել են ՏԿԵՆ-ի եւ ԱՄՆ ՄԶԳ-ի միջեւ գործընկերության համաձայնագրում, սակայն, ԱՄՆ ՄԶԳ-ի տեխնիկական օժանդակության դադարեցմամբ պայմանավորված, «Հայաստանի էներգետիկ անվտանգության ծրագիր» նախաձեռնությունը 2025թ. փետրվարին փակվել է: Տեխնիկական օժանդակության իրավական բաղադրիչը ներկայումս փոխանցվում է այլ դոնորների տեխնիկական օժանդակության թիմերին:

Միջպետական առևտուր. տարածաշրջանային շուկայի ինտեգրում

Հայաստանը զգալի առաջընթաց է գրանցել տարածաշրջանային շուկաների ինտեգրման խթանման գործում: Երկիրը ստորագրել է վավերացրել է ԵՄ-ի հետ Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ), որն ուժի մեջ է մտել 2021 թվականի մարտին եւ ներառում է ժամանակացույց՝ առաջիկա մի քանի տարվա ընթացքում եւ ամենաուշը մինչեւ 2029 թվականը ՀՀ օրենքներն ու կանոնակարգերը ԵՄ համապատասխան օրենքներին մոտարկելու համար: Հայաստանը նաեւ Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամ է, որը նպատակ ունի մինչեւ 2025 թվականը ստեղծել ԵԱՏՄ գազի եւ էլեկտրաէներգիայի ընդհանուր շուկաներ: Այս հավակնոտ նպատակների իրականացումը կպահանջի տարբեր հաստատությունների միջեւ սերտ համագործակցություն եւ համակարգում՝ նորմատիվ համապատասխանության հասնելու եւ հնարավոր հակասություններն ու տարընթերցումները վերացնելու համար:

Հայաստանը նպատակ ունի ընդլայնել Վրաստանի եւ Իրանի հետ փոխադարձ կապերը: Սա ընդգծում է նոր շուկայական կանոնների մշակման անհրաժեշտությունը՝ միջպետական առևտրի անը հնարավոր դարձնելու համար: Հայաստանը նման պայմանավորվածությունների ուղղությամբ ներկայումս աշխատում է ԵՄ-ի հետ՝ ՀԸԳՀ համաձայնագրի համատեքստում, ինչպես նաեւ ԵԱՏՄ-ի հետ՝ ներկայումս մշակման փուլում գտնվող Էլեկտրաէներգիայի ԵԱՏՄ ընդհանուր շուկայի մշակման շրջանակներում: Այս երկու գործընթացների զուգահեռ զարգացումը, հավանաբար, կպահանջի շրջահայաց համակարգում:

Հայաստանում բնական գազի ոլորտը մնում է ուղղահայաց ինտեգրված մենաշնորհ, որը շահագործվում է ռուսական «Գազպրոմ» ընկերության դուստր ձեռնարկություն հանդիսացող «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից եւ պատկանում է վերջինիս: Ներկայումս ոլորտում մրցակցություն կամ երրորդ կողմի մուտք չկա: Այնուամենայնիվ, 2021թ. էներգետիկ ռազմավարության համաձայն, ՀՀ կառավարությունը մտադիր էր մինչեւ 2024 թվականը վերանայել գազի ոլորտին առնչվող ողջ օրենսդրությունը: Հայաստանը՝ ԵԱՏՄ մյուս անդամ երկրների հետ միասին, պլանավորում էր 2025 թվականին գործարկել ԵԱՏՄ գազի ընդհանուր շուկան: 2025թ. մայիսի դրությամբ այս ոլորտում որեւէ զարգացում տեղի չի ունեցել:

Էներգախնայողության եւ Վերականգնվող էներգետիկայի 2022-2030թթ. ծրագիր

Էներգաարդյունավետության միջոցառումները հիմնված են ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 24-ի «Էներգախնայողության եւ վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագիրը հաստատելու մասին» որոշման, Էներգախնայողության եւ վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագրի առաջին փուլի (2022-2024թթ.) իրագործումն ապահովող



միջոցառումների ծրագրի, ինչպես նաև ծրագրի իրագործման ժամանակացույցի վրա: Ծրագիրը նպատակ ունի բարելավել Հայաստանի տնտեսության էներգաարդյունավետությունը հաջորդ տասը տարիների ընթացքում, խթանել էներգախնայողությունը եւ ավելացնել վերականգնվող էներգետիկայի աղբյուրների օգտագործումը՝ էներգետիկ անվտանգությունն ու հուսալիությունը բարձրացնելու եւ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը նվազեցնելու համար: 2022-2030թթ. ծրագիրը հաստատելու որոշման հավելված 2-ը կազմող ծրագիր-ժամանակացույցը սահմանում է ակնկալվող արդյունքն ու ազդեցությունը, պատասխանատու մարմինների եւ համատեղ իրականացնողների շրջանակը, միջոցառման վերջնաժամկետը եւ արժեքը, ինչպես նաև ֆինանսավորման աղբյուրները: Ծրագիրը նաև սահմանում է մշտադիտարկման եւ գնահատման մեխանիզմ, որը նախատեսում է, որ ծրագրի իրականացման հսկողությունը և հաշվետվողականությունը կլինի շարունակական, եւ առաջընթացի գնահատման գեկույցները կպատրաստվեն յուրաքանչյուր երեք տարին մեկ:

«էներգետիկայի մասին» ՀՀ օրենքը տալիս է «խոցելի սպառող» եզրույթի հետևյալ սահմանումը. «խոցելի սպառող՝ բնակիչ բաժանորդ, որը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով ստացել է խոցելի սպառողի կարգավիճակ՝ հաշվի առնելով վերջինիս սոցիալապես անապահով լինելու կամ հատուկ կարգավիճակ ունենալու հանգամանքը»:

ՀՀ օրենսդրությունն ԵՄ դիրեկտիվներում օգտագործվող «էներգետիկ աղքատության» եզրույթի որևէ այլ սահմանում չի ներառում բացի վերը նշված «խոցելի սպառող» ձևակերպումից: Ըստ էության, էներգիայի մատչելիության բոլոր քաղաքականությունները նպատակաուղղված են սոցիալապես խոցելի սպառողներին, մինչդեռ էներգետիկ աղքատության հասկացությունը կապված է ոչ թե եկամտի, այլ բավարար ջերմային հարմարավետություն ապահովելու հնարավորության հետ: Ջերմային հարմարավետության եւ էներգետիկ աղքատության հարաբերակցությունը ավելի հիմնարար է, սակայն ազգային վիճակագրական շրջանակը չի ներառում որևէ ցուցանիշ, որը կարող է հնարավորություն տալ գնահատել եւ նույնականացնել իրապես էներգետիկ աղքատներին՝ էներգետիկ աղքատության մեցցման ուղղությամբ որևէ քաղաքականության մշակման և պատշաճ հասցեագրման համար:



Ֆինանսավորում է
Եվրոպական միության կողմից

Աղյուսակ 5. Ընդունված Էներգասարդյունավետության քաղաքականության իրականացման բացերը

<p>ԷԱ գործող կանոնակարգերի կիրարկման (Ներառյալ կիրարկման ընթացակարգերի) բացակայություն</p>	<p>ՀՀ կառավարության վերջին որոշումը՝ պետական ներդրումային նախագծերում և բնակարանաշինության ոլորտում ԷԱ պահանջների պարտադիր պահպանման մասին՝ Էներգետիկ փորձաքննության կարգավորումներ</p> <p>Բոլոր ոլորտների համար նախատեսված ստանդարտներ և կոդեր, Էներգասարդյունավետության նվազագույն ստանդարտներ</p> <p>Սարքավորումների և շենքերի պիտակավորում</p> <p>Շենքերի Էներգետիկ արդյունավետություն</p>
<p>Առաջարկվել են հարակից օրենսդրական նախաձեռնություններ, սակայն դրանց ընդունման և/կամ կիրարկման ուղղությամբ առաջընթացը թերի է</p>	<p>ՀՀ օրենքի նախագիծ «Վերականգնվող Էներգետիկայի և Էներգասարդյունավետության մասին»</p> <p>ՀՀ օրենքի նախագիծ «Էլեկտրաէներգիայի մասին»</p> <p>Կայուն և կանաչ տնտեսական զարգացման ռազմավարություն</p> <p>ՀՀ օրենքի նախագիծ «Կլիմայի մասին»</p> <p>Բնակարանային քաղաքականության բարեփոխումների, շենքերի տեխնիկական անձնագրավորման և սեյսմիկ վերանորոգման ծրագրերի հետ կապված բոլոր առաջարկվող նախաձեռնությունների հետ համաձայնեցման ապահովում</p>
<p>ԷԱ ֆինանսական խթանների սահմանափակություն</p>	<p>«Էներգախնայողության և վերականգնվող Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի կամավոր դրույթների կատարման ծախսերը</p> <p>Մասնավոր տների և բազմաբնակարան շենքերի Էներգասարդյունավետացման պետական սուբսիդավորման շարունակման անհրաժեշտություն</p> <p>Լավագույն հասանելի տեխնոլոգիաների միջոցով չափորոշիչների ներդրումը և պահանջում է արտոնություններով զուգորդված խիստ օրենսդրական դրույթներ</p>
<p>Ֆինանսավորումը բավարար չափով հասանելի չէ բոլոր ոլորտների համար</p>	<p>ԷԱ վարկային գծերը բոլոր դեպքերում չէ, որ առաջարկում են այնպիսի ֆինանսավորման պայմաններ, որոնք համապատասխանում են ԷԱ ոլորտի վարկառուների առանձնահատուկ կարիքների</p> <p>Թեև մի շարք ոլորտներ՝ ինչպես հանրային շենքերը, տնային տնտեսությունները և կորպորատիվ սեգմենտը, սպասարկվում են մի քանի վարկային գծերով, բազմաբնակարան շենքերի ոլորտը ամբողջությամբ դուրս է մնացել այդ շրջանակից</p>
<p>Կարողությունների պակաս</p>	<p>Տեղական ֆինանսական հաստատությունները (ՖՀ) չունեն բավարար հմտություններ և գիտելիքներ՝ մասնավոր հատվածում ԷԱ ֆինանսավորման համար Էներգամատակարար ընկերություններն ունեն տեղական ՖՀ-ների հետ ներդրումային ծրագրերի իրականացման հմտությունների պակաս</p> <p>Արդյունաբերական ձեռնարկություններն ունեն ԷԱ-ի և դրա ծախսարդյունավետության ընկալման պակաս</p> <p>Բազմաբնակարան շենքերն ունեն ԷԱ ներդրումների վարկային գործընկեր հանդես գալու կարողության պակաս</p> <p>ՏԻՄ-երը ունեն Էներգետիկ պլանավորման և նախագծերի մշակման կարողությունների պակաս</p> <p>Կառավարությունն ունի ԷԱ ծրագրերի մշտադիտարկման հաշվետվողականության կարողությունների պակաս</p>
<p>Օգտագործողների բոլոր խմբերի շրջանում տեղեկատվության անբավարարություն և իրազեկվածության պակաս</p>	<p>ԷԱ-ի, ՎԷ-ի, տեխնիկական և ֆինանսական լուծումների, ծառայությունների և նյութերի մատակարարների մասին հնարավորությունների և առավելությունների վերաբերյալ տեղեկատվության պակաս</p> <p>Ենթադրուհեղում Էներգասպառման մոդելների, օգտագործվող տեխնոլոգիաների, Էներգախնայողության ներուժի վերաբերյալ տեղեկատվության պակաս</p> <p>Առկա է մոնիթորինգի, հաշվետվության և վավերացման համակարգի պակաս՝ տարբեր բաղաբաղանջությունների, կարողությունների զարգացման նախաձեռնությունների և ֆինանսավորման ծրագրերի արդյունավետությունը գնահատելու համար:</p>

Շենքերի Էներգասարդյունավետության դիրեկտիվ

Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2010 թվականի մայիսի 19-ի 2010/31/ԵՄ դիրեկտիվ շենքերի Էներգասարդյունավետության (ցուցանիշների) մասին (ՇԷԱԳ)

Շենքերի Էներգասարդյունավետության դիրեկտիվի հիմնական բաղադրիչները.

- Գրեթե զրոյական Էներգասպառմամբ շենքերի պահանջարկի ապահովում (խիստ ցածր Էներգասարդյունավետության/բնութագրից ցուցանիշ, տարեկան կՎտժ/մ²).
- Երկրի Էներգետիկ անվտանգության բարձրացում՝ շենքերի Էներգիայի ընդհանուր պահանջարկի նվազեցման միջոցով (և Էներգիայի գների աճի նկատմամբ բարձր դիմակայունություն).
- «Կանաչ» աշխատատեղերի ստեղծում՝ երկրում շենքերի համակարգային վերանորոգման արդյունքում.
- Հանրային շենքերի օրինակելի դերակատարություն.
- Շենքերի թվային ռեեստրի մշակում.
- Սակագնային բարեփոխում՝ պահանջարկի կառավարումը խթանելու նպատակով.



- Էներգասպասարկող ընկերությունների շրջանակի ներդրում:

Շենքերի վերանորոգման ռազմավարություն և ծրագիր

Հայաստանում առկա հիմնական բացերից մեկը շենքերի վերանորոգման ազգային ռազմավարության և դրան գույքահեռ տասնամյա գործառնական ծրագրի բացակայությունն է, որը կարող էր ապահովել հստակ միջոցառումների ծրագիր և պարտականությունների բաշխում՝ գործող շենքերի վերանորոգման մեջ ներդրումներ կատարելու նպատակով: Ավելին, հաշվի առնելով այն փաստը, որ Հայաստանը ներկայումս չունի գրեթե զրոյական էներգասպառմամբ շենքի (ԳՁԷՇ) սահմանում, ինչպես նաև վերանորոգման միջոցառումների ամբողջական փայթեթ՝ ազգային կամ տարածաշրջանային մակարդակում (հաշվի առնելով կլիմայական գոտիների տարբերությունները), վերականգնվող էներգետիկ տեխնոլոգիաների օգտագործումը (վերականգնվող էներգիայի պահանջվող նվազագույն մասնաբաժինը, ներառյալ նորակառույց բնակելի և հասարակական շենքերի էլեկտրաշարժունակության խթանումը) նույնպես չի գնահատվել շենքերի մակարդակով՝ շենքային ֆոնդի ծախսարդյունավետության վերլուծության շրջանակներում:

Թիրախային նպատակների սահմանում

Շենքերի էներգաարդյունավետ վերանորոգումն (ջերմաարդիականացումը) «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագրի» և դրա առաջին փուլի (2022-2024թթ.) իրագործումն ապահովող եռամյա ծրագիր-ժամանակացույցի բաղադրիչներից մեկն է, որը հաստատվել է ՀՀ կառավարության 2022թ. սեպտեմբերի 28-ի N 38-Լ որոշմամբ³: Սակայն ընդունված և նախատեսված միջոցառումների միայն փոքր մասն է ամբողջությամբ իրականացվել և ապահովել նախատեսված արդյունքները: Թեև որոշ միջոցառումներ ստացել են դոնորների կամ միջազգային ֆինանսական հաստատությունների տեխնիկական աջակցությունը՝ տարբեր հետազոտական կամ վերլուծական աշխատանքների համար, այդ աջակցությունը հիմնականում ստեղծել է իրավական և կարգավորիչ բարեփոխումների հիմք, որոնք պետք է իրականացնի ՀՀ կառավարությունը: «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագրի» երկրորդ փուլի (2025-2027թթ.) իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցը 2025թ. երրորդ եռամսյակի դրությամբ գտնվում էր սպասման փուլում⁴, սակայն գործընթացը դադարեցվել է ԱՄՆ ՄՁԳ կողմից ֆինանսավորվող տեխնիկական աջակցության դադարեցման պատճառով: 2025թ. հուլիսի դրությամբ դրա ընդունման ժամկետների հետ կապված հստակություն չկար: ՏԿԵՆ-ը դիմել է այլ դոնոր կազմակերպությունների՝ արդեն 2026-2030թթ. ժամանակահատվածի համար գործողությունների ծրագրի նախագծի վերամշակման և առաջխաղացման նպատակով:

Բազային (հղումային) արժեքների սահմանում

Հայաստանն արդեն ունի գործող քաղաքականությունների և նորմատիվային ակտերի հիմք, որը կարող է նպաստել շենքային ֆոնդի ապաածխայնացման գործընթացին: «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքը սահմանում է կառուցապատման կամ վերակառուցման թույլտվություններ ստանալու չափանիշները, որոնք կիրառվում են որպես քաղաքականության գործիք: Բացի այդ, «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով սահմանվում է շենքերի էներգաարդյունավետության հավաստագրման պարտադիր պահանջ՝ նորակառույց

³ Աղբյուր՝ <https://www.e-gov.am/gov-decrees/item/37978/>

⁴ <https://www.e-draft.am/projects/7666/justification>



բնակելի շենքերի եւ պետական միջոցներով վերակառուցվող շենքերի դեպքում: Հայաստանում գործում է նաեւ «Շենքերի ջերմային պաշտպանության» շինարարական նորմը, որը սահմանում է բոլոր շենքերի համար նվազագույն տեխնիկական չափորոշիչները, ներառյալ՝ շենքի էներգասարդյունավետության նվազագույն պահանջները:

- Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաեւ պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության եւ էներգասարդյունավետության տեխնիկական կանոնակարգ (հայտնի է որպես «Շենքերի էներգասարդյունավետության տեխնիկական կանոնակարգ», որը եւ սույն վերլուծության առարկան է):
- ՀՀՇՆ II-7.02-95 «Շինարարական ջերմաֆիզիկա. շենքերի պատող կոնստրուկցիաների. նախագծման նորմեր»:
- ՀՀ քաղաքաշինության նախարարի N 120-Ն հրամանը ՀՀՇՆ 24-01-2016 «Շենքերի ջերմային պաշտպանություն» շինարարական նորմը հաստատելու մասին (ՀՀ շինարարական նորմ, գրանցվել է 24.06.2016թ. ՀՀ արդարադատության նախարարության կողմից):
- «Քաղաքաշինություն. քաղաքային եւ գյուղական բնակավայրերի հատակագծում եւ կառուցապատում» (ՀՀՇՆ 30-01-2014):
- «Շինարարական կլիմայաբանություն» (ՀՀՇՆ II-7.01-2011):
- «Էներգասարդյունավետություն. Շենքի էներգետիկ անձնագիր» ՀՀ ստանդարտ (ՀՍՏ 362-2013):
- «Էներգետիկ փորձաքննության մեթոդաբանություն» ՀՀ ստանդարտ (ՀՍՏ 371-2016):
- ՀՀՇՆ 24-02-2022 «Շենքերի էներգասարդյունավետության ապահովում. Էներգասարդյունավետության գնահատման ցուցանիշներ»:
- ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն»:
- 26 ազգային ստանդարտներ, 17 ԵՄ եւ ISO էներգասարդյունավետության ստանդարտներ:

ՀԸԳՀ նպատակների լիարժեք իրագործման համար անհրաժեշտ է մշակել եւ կիրառել երկարաժամկետ պլանավորման համար նախատեսված ենթաօբյեկտային ակտեր: Դրանք ներառում են Էներգետիկայի եւ կլիմայի ազգային ծրագիրը, Շենքերի վերանորոգման ծրագիրը՝ 10-ամյա իրականացման ռազմավարությամբ, գրեթե զրոյական էներգասպառմամբ և ցածր ածխածնային շենքերի ազգային ծրագիրը, ինչպես նաեւ շենքերի էներգասարդյունավետության հավաստագրման կանոնակարգերը, մեթոդաբանությունները եւ համակարգերը:

Շենքի էներգետիկ անձնագիր եւ հավաստագրում

Հայաստանը մշակել է երկու ազգային ստանդարտ, որոնք հիմք են հանդիսանում շինարարության ոլորտում Եվրոպական կանաչ գործարքի սահմանած նպատակների իրականացման համար՝ «Էներգախնայողություն. Շենքի էներգետիկ անձնագիր. Հիմնական դրույթներ. Տիպային ձև» եւ «Բնակելի եւ հասարակական շենքերում էներգետիկ փորձաքննության անցկացման մեթոդաբանություն»:

«Հավաստագրման մասին» օրենքի համաձայն՝ էներգետիկ անձնագիր կարող են կազմել եւ տրամադրել օրենքի համաձայն հավաստագրված հավաստագրման մարմինների կողմից հավաստագրված անձինք՝ այդպիսով ապահովելով շենքերի էներգասարդյունավետության գնահատման համակարգված մոտեցում:



Հայաստանի առկա շենքային ֆոնդի շրջանակներում Շենքերի էներգաարդյունավետության մասին ԵՄ դիրեկտիվի կիրարկման համար անհրաժեշտ մի շարք գործիքներ բացակայում են: Մասնավորապես՝ շենքերի երկու ենթադասակներում՝ առկա բնակելի և ոչ բնակելի շենքերում, պետք է ապահովվեն նշված հրահանգով սահմանված էներգաարդյունավետության նվազագույն պահանջներ, որոնք պարտադիր պետք է հաշվի առնվեն շենքերի ջերմաարդիականացման ժամանակ: Բացի այդ, Հայաստանը պետք է սահմանի հստակ ամսաթիվ, երբ նորակառույց բնակելի և ոչ բնակելի շենքերը պետք է համապատասխանեն գրեթե զրոյական էներգասպառման ցուցանիշին: Հայաստանում բացակայում է հատուկ և կառավարության կողմից պաշտոնապես հաստատված էներգաարդյունավետության հավաստագրման ծրագրակազմ (համակարգչային, հաշվարկային գործիք), որը կծառայի որպես շենքերի գնահատման և նորակառույց շենքերի էներգաարդյունավետության վկայականների տրամադրման միացյալ գործիք (շինարարական թույլտվություն ստանալու համար) և առկա շենքերի վերանորոգման գործիք (արդյունավետության նվազագույն պահանջների մասով իրականացված ԷԱ/ՎԷ միջոցառումների համապատասխանությունն ապացուցելու համար նախնական էներգետիկ փորձաքննություններ անցկացնելու նպատակով):

Հայաստանը պետք է քայլեր ձեռնարկի՝ ապահովելու համար, որ ազգային մարմինները և/կամ հաստատությունները (օրինակ՝ տեխնիկական ուղղվածություն ունեցող համալսարանները կամ ֆակուլտետները, ընկերությունները և այլն) իրականացնեն պարզ և բարդ շենքերի էներգետիկ փորձաքննողների, շինարարական տեսուչների և այլնի համար նախատեսված ուսումնական ծրագրեր:

Շենքի վերանորոգման անձնագիր

Ներկայումս չկան պահանջներ վերանորոգվող շենքերի համար մշակելու և հանրայնացնելու Շենքի վերանորոգման անձնագիր: Նորակառույց շենքերի համար չկան պահանջներ, որոնք կպարտադրեին էլեկտրական շարժունակության ներդրումը՝ շենքերը հագեցնելով որոշակի նվազագույն քանակությամբ էլեկտրական մեքենաների համար լիցքավորման կետերով և կենտրոնացված ջերմամատակարարման համար խողովակաշարային ենթակառուցվածքներով (այսինքն՝ գոյություն ունեցող ոչ բնակելի և նորակառույց բնակելի և ոչ բնակելի շենքերի համար):

Գրեթե զրոյական էներգասպառմամբ շենքեր

Հայաստանում «կանաչ» շինարարության ազգային կանոնակարգեր գոյություն չունեն: «Կանաչ» շենքերի շուկան գնահատելու համար անհրաժեշտ է քննարկել միջազգայնորեն ճանաչված հավաստագրման սխեմաները, ինչպիսիք են՝ LEED-ը, BREEAM-ը և EDGE-ը՝ փորձի և հմտությունների գնահատման, ինչպես նաև անցումային փուլում գտնվող ազգային քաղաքականությունների վիճակը հասկանալու համար: Իսոպը մասնավորապես վերաբերվում է բարձր էներգաարդյունավետության շենքերին, գրեթե զրոյական էներգասպառմամբ շենքերին (ԳԶԷԾ) և/կամ ցածր ածխածնային շենքերին, որոնք սովորաբար կարգավորվում են ԵՄ երկրների ազգային քաղաքական փաստաթղթերով:

Մեկ այլ բացթողում է այն փաստը, որ դինամիկ համապատասխանեցման պահանջին հակառակ, ՇԷԱԳ-ին վերաբերող ենթաօրենսդրական ակտերն ու կանոնակարգերը ԵՄ հրահանգների տեսանկյունից հնացած են՝ հաշվի առնելով այն փաստը, որ 2023 թվականին ընդունվել է ԷԱՀ-ի վերանայված տարբերակը, իսկ 2024 թվականին՝ ՇԷԱԳ-ինը: Այնուամենայնիվ, Հայաստանում վերջերս ընդունված և ակնկալվող ազգային իրավական ակտերը կարող են լավ հիմք ծառայել



լրացուցիչ փոփոխությունների եւ թարմացումների համար, սակայն դրանք պետք է մշակվեն եւ թարմացվեն կարճ ժամանակահատվածում, եթե Հայաստանը ցանկանում է մինչեւ 2050 թվականը հասնել Ծինարարության ոլորտում „Կանաչ Գործարքի“-ի նպատակներին:

Աղյուսակ 6. ԾԷԱԳ-ի հետ մոտարկման հիմնական տարրերը Հայաստանում. համապատասխանության գնահատում

	Կարգավորման տարրեր	Մոտարկման կարգավիճակ
1.	Շենքերի վերանորոգման երկարաժամկետ ազգային ռազմավարություն	Մոտարկում չկա
2.	Շենքի վերանորոգման ծրագիր	Մոտարկում չկա
3.	Շենքերի էներգետիկ արդյունավետություն – էներգիայի տարեկան միջին պահանջարկ Շենքերի էներգետիկ արդյունավետություն – էներգիայի տարեկան միջին պահանջարկ. <ul style="list-style-type: none"> Հանրային հատվածի շենքեր՝ տարեկան 250 կՎտժ/մ2 Բնակելի շենքեր՝ տարեկան 180 կՎտժ/մ2 	Մասնակի մոտարկում՝ ԾԷԱՏԿ-ի եւ ՀՍ 362-2013-ի միջոցով (տե՛ս Հավելված 1) Շենքերի էներգետիկ արդյունավետություն – էներգիայի տարեկան միջին պահանջարկ⁵. <ul style="list-style-type: none"> Հանրային հատվածի շենքեր՝ տարեկան 300 կՎտժ/մ2 (Երևանի քաղաքապետարան, 2017թ.) Բնակելի շենքեր՝ տարեկան 185 կՎտժ/մ2
4.	Տարեկան վերանորոգման նպատակային ցուցանիշ. <ul style="list-style-type: none"> մինչեւ 2030 թվականն առնվազն կրկնապատկել բնակելի եւ ոչ բնակելի շենքերի էներգաարդյունավետ վերանորոգման տեմպերը (ներկայումս գնահատվում է 1%) նախաձեռնել էներգաարդյունավետ վերանորոգումներ, որոնք կարող են շենքերի էներգասպառումը կրճատել առնվազն 60%-ով 	Մոտարկում չկա ԷԽՎԷԱԾ ծրագրում շենքերի վերանորոգման նպատակները չեն արտացոլում հայտարարված հավակնությունները, «EE1st» սկզբունքը կամ «Fit for 55» նախաձեռնության պահանջները: 3-րդ ԷԱԱՄԾ-ում եւ 4-րդ ԷԱԱՄԾ-ի նախաձեռնում քանակական նպատակների բացակայություն
5.	Շենքերի էներգետիկ վկայագրեր (EPC)	Մոտարկում չկա
6.	Շենքերի տվյալների շտեմարան եւ շենքերի թվային գրանցամատյան/ռեեստր	Մոտարկում չկա
7.	Գրեթե զրոյական էներգասպառմամբ շենքի (եւ ՎԷԱ-ի %-ի) սահմանում	Մոտարկում չկա
8.	Գրեթե զրոյականից զրոյական էներգասպառմամբ շենքերի անցման պարտադիր նպատակ	Մոտարկում չկա

⁵ Նշում. Հայաստանում շենքերի համապարփակ գույքագրում երբեք չի իրականացվել:



9.	«Մեկ պատուհանի» ծառայություններ՝ ԷԱ աջակցության համար	սկզբունքով վերանորոգման	Մոտարկում չկա
10.	Ֆինանսների մատչելիություն		Մոտարկում չկա

Շենքերի էներգաարդյունավետությունն այն հիմնական քաղաքականության ուղղությունն է, որը կմնա գրեթե անփոփոխ՝ «Էլեկտրաէներգիայի մասին» եւ «Վերականգնվող էներգետիկայի եւ էներգաարդյունավետության մասին» նոր օրենքների ընդունումից հետո: Շենքերի էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը եւ կից ենթաօրենսդրական ակտերը մշակվել են՝ ԵՄ համապատասխան հրահանգի պահանջներին համապատասխանություն ապահովելու համար:

Աղյուսակ 7. Բացերը վերացնելու եւ առաջ շարժվելու ուղիները

Շարունակական բարեփոխումներ	«Էներգահիսնայողության եւ վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի փոխարինում «Վերականգնվող էներգետիկայի եւ էներգաարդյունավետության մասին» նոր օրենքի նախագծով
<ul style="list-style-type: none"> Պետական գնումների գործընթացում էներգետիկ փորձաքննության եւ էներգաարդյունավետության վերաբերյալ ենթաօրենսդրական ակտերի ընդունում/կիրարկում ԷԱ նվազագույն չափանիշների, ԷԱ հավաստագրերի, ԳԶԵՇ, ՉԵՇ կողերի եւ պիտակավորման մշակում/կիրարկում բոլոր դեպքերի համար 	
ԷԱ ֆինանսավորում	ՀԿԷԷ հիմնադրամի գործունեության շարունակություն եւ ընդլայնում
<ul style="list-style-type: none"> ԵՏԲ հիմնադրամի դրամաշնորհային համաֆինանսավորման սահուն ինտեգրում ոչ բանկային ֆինանսավորմամբ նախագծերի համար ՄՖՀ-ների եւ ՏՖՀ-ների ռեսուրսների օգտագործում՝ ԷԱ ֆինանսավորման շուկայի թերսպասարկվող հատվածներին հասցեագրելու համար Էներգիայի/ածխածնի հարկման կամ ԷԱ պարտավորությունների սխեմաների մշակում՝ սպառման կողմից ԷԱ ընդլայնման նպատակով 	
Նոր/բարելավված բնակարանային օրենսդրություն	Բազմաբնակարան շենքերի ոլորտում նպաստավոր ներդրումային միջավայրի ստեղծում
<ul style="list-style-type: none"> Ներգրավել մասնավոր հատվածը՝ մասնավոր սպասարկող ընկերությունների եւ ԷԾՄԸ-ների միջոցով Մշակել «Մեկ պատուհանի» համակարգեր՝ շենքերում ԷԱ ներդրումային ծրագրերը խթանելու նպատակով Մշակել պետական երաշխիքային գործիքներ՝ ֆինանսական հասանելիությունն ապահովելու եւ խթանելու համար 	
Սակագնային բարեփոխումներ	Սակագների վերանայում՝ էներգաարդյունավետությունը խթանելու նպատակով
<ul style="list-style-type: none"> Աջակցություն ցածր եկամուտ ունեցող բնակիչներին՝ ԷԱ միջոցառումների իրականացման համար Գյուղատնտեսական ոլորտում բնական գազի տուբսիդիաների վերացում՝ վերջնական սպառման արդյունավետությունը խթանելու նպատակով 	
ԷԱ-ին ինտեգրված վերականգնվող էներգետիկ	խթաններ՝ էներգաարդյունավետության հետ վերականգնվող էներգետիկայի ավելի լայն համակցված կիրառման համար
Տեղեկատվություն եւ իրազեկում	Էներգաարդյունավետության վերաբերյալ տվյալների հավաքագրման եւ պարբերական էներգետիկ հաշվեկշռի հաշվարկման բարելավում
<ul style="list-style-type: none"> Արդյունաբերական եւ գյուղատնտեսական ոլորտների (օրինակ՝ ջերմոցային տնտեսություններ եւ ձկնաբուծարաններ) համար ԷԱ լավագույն տեխնոլոգիաների մշակում եւ տեխնիկական աջակցության տրամադրում Ներդնել խելացի շենքային համակարգեր եւ մշակել ու ներդնել արեային էներգիայի տեղադրմանը հարմար տանիքների պահանջներ շենքերի նախագծման եւ կառուցման գործընթացում 	
Կարողությունների զարգացում	Կազմակերպությունների, ՓՄՁ-ների, ԷԾՄԸ-ների եւ համայնքային իշխանությունների՝ ԷԱ պլանավորման եւ իրականացման կարողությունների զարգացում
<ul style="list-style-type: none"> Պետական ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդում ԷԱ քաղաքականության մշակման եւ իրականացման համար Ստեղծել կամ նախատեսել մարմիններ՝ ԷԱՄԾ-ների իրականացման հսկողության եւ մոնիթորինգի, հաշվետվության եւ վավերացման գործընթացների համար 	

Էներգիա օգտագործող արտադրանքի համար Էկոդիզայնի պահանջների սահմանման շրջանակ. 2009/125/ԵՀ դիրեկտիվ

Էկոդիզայնի եւ էներգետիկ պիտակավորման համադրությունը համարվում է էներգաարդյունավետության ոլորտում քաղաքականության իրականացման ամենաարդյունավետ գործիքներից մեկը⁶: Էկոդիզայնի հրահանգը սահմանում է էներգիա օգտագործող արտադրանքի համար Էկոդիզայնի պահանջներ սահմանելու շրջանակ՝ դրանց Էկոդիզայնի ցուցանիշները

⁶ <https://www.eceee.org/ecodesign/process/>



բարելավելու եւ ԵՄ շուկայում ազատ տեղաշարժն ապահովելու համար⁷: Այն նպաստում է կայուն զարգացմանը՝ բարձրացնելով էներգաարդյունավետությունը եւ շրջակա միջավայրի պաշտպանությունը, միաժամանակ բարձրացնելով էներգամատակարարման անվտանգությունը: Այն չի վերաբերում մարդատար կամ ապրանքատար տրանսպորտային միջոցներին: Եվրասիական տնտեսական միության պարտադիր դրույթներով պայմանավորված՝ ՀՀ կառավարությունը քայլեր չի ձեռնարկել էներգիա օգտագործող արտադրանքի համար էկոդիզայնի պահանջներ սահմանելու ուղղությամբ՝ հիմնավորելով ԵԱՏՄ համարժեք պահանջների հետ դրանց անհամատեղելիությունը:

Ատոմային էներգիա եւ անվտանգություն, հոդված 58

ՀՀ ատոմային էներգետիկայի քաղաքականությունը կենտրոնացած է էներգետիկ անվտանգության, անվտանգության բարձրացման եւ միջազգային չափանիշներին համապատասխանության վրա: Հայկական ատոմային էլեկտրակայանն (ՀԱԷԿ) առանցքային դեր է խաղում՝ ապահովելով երկրի էլեկտրաէներգիայի մոտ 45%-ը: Ստորեւ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությամբ՝ վերլուծության է ենթարկվել համապատասխան իրավական դաշտը կարգավորող առաջնային օրենսդրության, ռազմավարական եւ ծրագրային փաստաթղթերի շրջանակը:

1. **«Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1999թ.)**, սույն օրենքը սահմանում է ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման կարգավորող շրջանակը: Այն ընդգծում է միջուկային տեղակայանքների եւ ճառագայթման աղբյուրների անվտանգության միջոցառումները⁸:
2. **«ՀՀ-ում նոր ատոմային էներգաբլոկի (էներգաբլոկների) կառուցման նպատակով ՓԲԸ ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշում (2009թ.)**, ընդունվել է նոր ատոմային էներգաբլոկների կառուցումը խթանելու, էներգետիկ անկախությունն ու անվտանգությունը բարձրացնելու նպատակով⁹:
3. **ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր**, սույն ռազմավարությունն ուրվագծում է երկրի էներգետիկ զարգացման ծրագիրը, ներառյալ նոր միջուկային հզորությունների շահագործման ժամանակացույցը¹⁰:
4. **ՀՀ էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիր (մինչեւ 2040 թվականը)**, 2021 թվականին ընդունված համապարփակ ճանապարհային քարտեզ, որը շեշտը դնում է ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման եւ նոր միջուկային էներգաբլոկների կառուցման ծրագրերի վրա:
5. **Անվտանգություն եւ միջազգային համագործակցություն**, Հայաստանը հանձնառու է միջուկային անվտանգությունը համապատասխանեցնել միջազգային չափանիշներին.
 - Երկիրը վավերացրել է այնպիսի միջազգային պայմանագրեր, ինչպիսիք են՝ Միջուկային անվտանգության մասին կոնվենցիան եւ Միջուկային նյութի ֆիզիկական պաշտպանության մասին կոնվենցիան.
 - Անվտանգության նշանակալի բարելավումներից է ՀԱԷԿ-ի միջուկային ռեակտորի իրանի թրծաթողումը 2021 թվականին:

⁷ <http://data.europa.eu/eli/dir/2009/125/oj>

⁸ Աղբյուրը՝ VERTIC

⁹ Աղբյուրը՝ [Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն](#), Հայաստանի 9-րդ ազգային զեկույցը Միջուկային անվտանգության մասին կոնվենցիայի շրջանակներում

¹⁰ Աղբյուրը՝ [Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն](#), Հայաստանի 9-րդ ազգային զեկույցը Միջուկային անվտանգության մասին կոնվենցիայի շրջանակներում



Տինանավորվում է
Եվրոպական միության կողմից

«Աջակցություն ՀԸԳՀ-ի մշտադիտարկմանը, իրականացմանը և հաղորդակցությանը»
ENI/2023/442-873

ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեն վերահսկում է միջուկային անվտանգության ապահովումը եւ ներգրավվում է միջազգային համագործակցությաւններում անվտանգության չափանիշները բարելավելու համար:



Քաղաքականության առաջարկություններ

Հասցեատեր	Առաջարկության մակարդակ	Ակնկալվող կոնկրետ միջոցառումներ
ՀՀ կառավարություն	Օրենսդրական	<p>Ավարտին հասցնել եւ ընդունել «Վերականգնվող էներգետիկայի եւ էներգաարդյունավետության մասին» եւ «Էլեկտրաէներգիայի մասին» նոր օրենքները՝ ԵՄ էներգաարդյունավետության մասին եւ Շենքերի էներգաարդյունավետության մասին վերանայված հրահանգների ինտեգրմամբ:</p> <p>Մշակել էներգետիկ եւ կլիմայի ազգային ծրագիր՝ էներգախնայողության եւ կլիմայի մեղմացման համալիր նպատակներով եւ իրականացման մեխանիզմներով:</p>
ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություն (ՏԿԵՆ)	Ինստիտուցիոնալ	Ստեղծել շենքերի էներգաարդյունավետության հարցերով ստորաբաժանում՝ ՇԷԱԴ-ին համապատասխան վերանորոգման ծրագրերի եւ հավաստագրման համակարգերի իրականացումը վերահսկելու համար:
ՀՀ Քաղաքաշինության կոմիտե	Կարգավորում	<p>Մշակել եւ ընդունել ՀՀ հանրային եւ բնակելի շենքերի վերանորոգման երկարաժամկետ ռազմավարություն և 10-ամյա գործառնական ծրագիր:</p> <p>Մշակել շենքերի թվային գրանցամատյանի/ռեեստրի մշակման շրջանակը եւ տեխնիկական պայմանները:</p> <p>Մշակել ցածր ածխածնային և զրոյական շենքերի խթանման հայեցակարգ</p>
ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	Քաղաքականության իրականացում	<p>Մշակել եւ ընդունել էներգետիկ ծառայություններ մատուցող ընկերությունների եւ արդյունավետության պայմանագրերի ազգային շրջանակ՝ մասնավոր հատվածի ներգրավվածությունը հնարավոր դարձնելու համար:</p> <p>Մշակել նպատակային էներգաարդյունավետության ծրագիր</p>



		Էներգասպառող խոշոր ձեռնարկությունների համար:
ՀՀ ֆինանսների նախարարություն և Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ	Ֆինանսական մեխանիզմներ	Մշակել ֆիսկալ գործիքներ՝ տնտեսության բոլոր ոլորտներում էներգաարդյունավետության ֆինանսավորման հասանելիությունը նյութացնելու համար՝ օգտագործելով անհատականացված գործիքներ, ինչպիսիք են սուբսիդավորված էներգետիկ փորձաքննությունները, նվազեցված տոկոսադրույքները, դրամաշնորհների համաֆինանսավորումը, վարկային երաշխիքները և այլն:
ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն և Արմատատ	Կարգավորում և վիճակագրություն	Ներկայացնել «էներգետիկ աղբատության» սահմանումը և ազգային ցուցանիշների հավաքածուն՝ սոցիալական պաշտպանության և էներգաարդյունավետության քաղաքականությունների արդյունավետ հասցեականությունը և մոնիթորինգը հնարավոր դարձնելու համար:
Հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողով (ՀԾԿՀ)	Ծուկայի բարեփոխումներ	Ներմուծել էներգաարդյունավետության ուղղությամբ ներդրումների շուկայական խթանների կարգավորիչ դրույթներ, ներառյալ սակագնային բարեփոխումները՝ պահանջարկի կառավարմանն աջակցելու համար:
ՀՀ կառավարություն և ՏԿԵՆ	Քաղաքականության համակարգում	Ստեղծել ՀԸԳՀ-ից բխող էներգետիկ բարեփոխումների միջգերատեսչական համակարգող մարմին՝ ՀԸԳՀ-ի և ԵԱՏՄ նորմատիվ պարտավորությունների ներդաշնակեցումն ապահովելու համար:
Հայաստանում ԵՄ պատվիրակություն	Տեխնիկական օժանդակություն	Ընդլայնել ՇԷԱԴ/ԷԱԴ վերանայված դրույթների կիրարկմանն ուղղված տեխնիկական օժանդակությունը և խորհրդատվական աջակցությունը, ներառյալ կարողությունների զարգացումը և ծրագրային ապահովման մշակումը: Աջակցել



		հատկապես դիմամիկ համապատասխանեցման աշխատանքներին:
Քաղաքացիական հասարակություն և գիտական շրջանակներ	Կարողությունների զարգացում	Մշակել և ներդնել ԵՄ չափանիշներին համապատասխան հավատարմագրված վերապատրաստման և հավաստագրման ծրագրեր էներգետիկ փորձաքննողների, շինարարական տեսուչների և վերանորոգման մասնագետների համար: Չարգացնել և պահպանել կառավարության հետ երկխոսությունը կայուն էներգիայի օրակարգի շուրջ:
Համայնքային իշխանություններ	Տեղական իրականացում	Իրականացնել ՇԷԱԴ համապատասխան չափանիշների վրա հիմնված և խոցելի ու «էներգետիկ աղքատ» տնային տնտեսություններին ուղղված վերանորոգման համայնքային պիլոտային ծրագրեր՝ ԵՄ/ՄՖՀ համաֆինանսավորմամբ և աջակցությամբ: Նշված ծրագրերը կարող են իրականացվել «Քաղաքապետերի դաշնագիր հանուն կլիմայի և էներգիայի» նախաձեռնության ներքո նրանց ստանձնած կայուն էներգետիկայի և կլիմայի հանձնառությունների շրջանակում:

Եզրակացություններ

Հայաստանը տպավորիչ առաջընթաց է գրանցել իր էներգետիկ քաղաքականությունը և իրավական դաշտը ՀԸԳՀ-ի շրջանակներում ԵՄ օրենսդրությանը համապատասխանեցնելու գործում՝ մասնավորապես՝ էներգաարդյունավետության, շենքերի էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի զարգացման ոլորտներում: Ընդունվել են կամ ընդունման փուլում են մի շարք իրավական փաստաթղթեր, այդ թվում՝ հիմնական օրենքներ, տեխնիկական կանոնակարգեր և ռազմավարական փաստաթղթեր: Այնուամենայնիվ, իրականացման ուղղությամբ դեռևս կան զգալի բացեր, մասնավորապես՝ կիրարկման մեխանիզմների, ինստիտուցիոնալ համակարգման, ֆինանսավորման սխեմաների և ԵՄ վերանայված հրահանգներին համապատասխան երկրորդային օրենսդրության պատշաճ ընդունման ոլորտներում:

Հիմնական թերություններն առնչվում են շենքերի վերանորոգման երկարաժամկետ ռազմավարության մշակմանը, շենքերի համար էներգաարդյունավետության նվազագույն չափորոշիչների սահմանմանը, էներգաարդյունավետության ավելի հավակնոտ և չափելի քանակական նպատակների սահմանմանը, ինչպես նաև օժանդակ գործիքների ներդրմանը, ինչպիսիք են էներգետիկ ծառայություններ մատուցող ընկերությունների ազգային շրջանակները,



շենքերի էներգետիկ հավաստագրումը եւ նորարարական ֆինանսավորման մեխանիզմները: Ավելին, ՀԸԳՀ-ի եւ Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) շրջանակներում Հայաստանի ստանձնած պարտավորությունները ենթադրում են հակասական կարգավորիչ շրջանակների ներդրում, մասնավորապես՝ ազդելով Էկոդիզայնի եւ էներգետիկ պիտակավորման հրահանգների ուղղությամբ առաջընթացի վրա:

ՀԸԳՀ-ից բխող իր պարտավորությունները կատարելու եւ «Եվրոպական կանաչ գործարքի» նպատակների ուղղությամբ առաջընթաց գրանցելու համար Հայաստանը պետք է արագորեն ավարտին հասցնի առկախված օրենսդրության մշակումը, բարելավի միջգերատեսչական համակարգումը եւ ամրապնդի էներգետիկ բարեփոխումներին նպաստող ինստիտուցիոնալ եւ ֆինանսական էկոհամակարգը: Շահագրգիռ կողմերի, մասնավորապես՝ համայնքային իշխանությունների եւ քաղաքացիական հասարակության ներգրավվածության ապահովումը կարեւորագույն նշանակություն կունենա շենքերի վերանորոգման արդյունավետ ռազմավարությունների եւ սպառողների (մասնավորապես՝ խոցելի տնային տնտեսությունների) իրավունքների պաշտպանության շրջանակների ներդրման համար: